Ալեքսանդր Շիրվանզադե

Պատվիրված մաղթանքներ

Կատարում եմ «Տարազի» պատվերը: Խմբագրության տրված ցուցակի համեմատ այսօրվա հանդիսավոր տոնի առթիվ մաղթում եմ .

Ներսիսյան դպրոցին. Ազատություն ազատամտությունը հարստահարող ցեցերից . . .

Նույն դպրոցի ուսուցչական խմբին. Մի քիչ մանկավարժական հոտառություն:

Բաքվի մարդասիրական ընկերությանը. Միշտ մնալ անուշադիր դեպի Թիֆլիսից եկած կուսակցական ինտրիգները, ինչպես անուշադիր է այժմ . . .

Կովկասի բարեգործական ընկերությանը. Հետևել Բաքվի մարդասիրական ընկերության բուն քրիստոնեական ուղղությանը, չթույլ տալ խորհրդի քարտուղարին բարեգործությունը շփոթել լվացարարության հետ և, վերջապես, ազատվել վնասակար միջատների չար միտումներից . . .

Հայուհյաց ընկերությանը Շարունակել այժմյան պես միշտ վարչության դռները փակ պահել ազատամտությունը կաչաղակության հետ շփոթող սևափետուր թռչուններից:

Հայոց գրքերի խայտառակչական ընկերության վարչության և խմբագրական մասնաժողովին. Առաջինին շարունակել համառությամբ ընկերության դռները փակ պահել ճշմարտության և ազնվության առջև և աշխատել շատացնել իր պատմության մեջ սև էջերի թիվը: Երկրորդին շարունակել խարազանով դուրս

վանել ընկերության գրքերիը հայերեն լեզուն... և ընդունել միշտ այնպիսի անդամներ, որ հայոց լեզվի այբ ու բենը նոր են սկսում սովորել: Այդ ավելի ձեռնտու է...

Բաքվի նոր թատրոնական կոմիտեն. 1) Ազատ մնալ նախկին կոմիտեի սխալներից . 2) Զոհ չդառնալ «սխալ հաշիվների». 3) Զգուշանալ Պոլիսը սիրած «պատգամավորների» բարեկամական ցույցերից . 4) Գտնել սիրահարների դերերի համար դերասան:

Քաղաքագլուխ Եվանգուլյանին. Զգույշ, զգույշ և օպոզիցիայի ծղրիդները կլռեն:

«Новое обозрение»-ին. Ուժ անաչառության անշահասեր պաշտպան երրորդությանը:

«Тифлисский листок»-ին . Սուր ասեղների անսպառ պաշար, սուտ ասողների կողերը միշտ այդպես ծակելու համար:

«Кавказь»-ի այժմյան խմբագրին . Մազաչափ արդարամտություն:

«Իվերիային». Մի կաթիլ խելք . . .

Կվալիին. Չշեղվել . . .

Իշխ. Ակակի Ծերեթելիին. Ազատություն Մառի ճանկերից:

Մառին. Ներողամիտ վերաբերվել դեպի թեթևամտությունը:

«Տարազին». Տասնապատկումն բաժանորդների արդեն եռապատկված թվին:

«Մշակին» . Երկու տարեկան մանուկների շնորհավորականներ:

«Մուրճին». Ավելի ուժ սալի վրա ավելի տափակացնելու սուտ ազատամիտների, ազատամիտ ստախոսների, կեղծավորների և նորագույն եզվիտների գլուխները . . .

«Բազմավեպին». Զգուշանալ «Մշակի» պաշտպանած գրականական գողերից:

«Հանդես Ամսօրեայի». Ոչ թե առաջարկել խուզարկելու պոստատները, այլ «Բազմավեպի» գրական գողերի գրվածները: